ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ .....

ք. Երևան _____ _____ 2021 թվական

Սույն Պայմանագրով «ԲՐՈԿԵՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (պետ. գրանցման համար՝ 264.110.1187139, ՀՎՀՀ՝ 00239913, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վերին Անտառային 135շ., բն. 18), ի դեմս տնօրեն Վահե Աճառյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ ***Կատարող***՝ մի կողմից, և

_____ (մաքսային ձևակերպումների որակավորման վկայական՝ _____, նույնականացման քարտ՝ _____, տրված՝ ___.____._____թ-ին, _____-ի կողմից, հասցե՝ _____, ով գործում է իր անունից, այսուհետ՝ ***Պատվիրատու***՝ մյուս կողմից, անվանվելով ***Կողմեր***՝ միասին, և ***Կողմ***՝ առանձին, առաջնորդվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ ***Պայմանագիր,*** հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.

1.1. Սույն *Պայմանագրով Կատարողը Պատվիրատուի* կողմից տրամադրված և *Պատվիրատուի* կողմից *Կատարողի* վեբ-կայքում մուտքագրված տեղեկատվության հիման վրա պարտավորվում է մատուցել ներքոհիշյալ ծառայությունները (այսուհետ՝ *Ծառայություն*)՝

1.1.1. *Կատարողի* կողմից վարվող **www.brokers.am** վեբ կայքի (այսուհետ՝ ***Կայք***) միջոցով *Պատվիրատուին* տրամադրվում է հարթակ, որով վերջինս հնարավորություն է ունենալու ծանոթանալու, ընդունելու կամ այլ կերպ ակցեպտավորելու մաքսային բրոքերական ծառայությունների պատվերներ երրորդ անձանցից և ինքնուրույն, իր ռիսկով իրականացնել բեռի մաքսազերծման, մաքսային ձևակերպումների, ինչպես նաև ցանկացած այլ գործունեության հետ, որն ուղղակի կամ անուղղակի կերպով կարող է առնչվել մաքսային բրոքերական ծառայության հետ, իսկ *Պատվիրատուն* պարտավորվում է վճարել *Կատարողին* հարթակի տրամադրման համար սույն *Պայմանագրով* սահմանված կարգով և չափով:

1.1.2. Մինչև սույն *Պայմանագրի* 1.1.3-րդ կետով սահմանված պահը երրորդ անձի անհատական կոնտակտային տվյալները (հեռախոս, էլ. փոստ և այլն) պահվում են գաղտնագրված և հասանելի չեն լինելու *Պատվիրատուին*:

1.1.3. *Պայմանագրի* 1.1-րդ կետում նկարագրված Ծառայությունն իրականացվում է, բայց չի սահմանափակվում հետևյալ եղանակով՝

Ա) Երրորդ անձը ներկայացնում է մաքսային բրոքերական ծառայությունների պատվեր.

Բ) Պատվիրատուն հնարավորություն է ունենում պատվերի նկատմամբ ներկայացնել գնառաջարկ.

Գ) Պատվիրատուի կողմից ներկայացված գնառաջարկը պատվերը ներկայացրած երրորդ անձի կողմից ընդունվելու դեպքում պատվերը ներկայացրած երրորդ անձը *Պատվիրատուի* վերջնական հաստատմանն է ներկայացնում հնարավոր համագործակցություն սկսելու վերջնաժամկետ, որը *Պատվիրատուն* կարող է ընդունել կամ մերժել.

Դ) Պատվիրատուի վերջնական հաստատումից հետո նրան հասանելի են դառնալու պատվերը ներկայացրած երրորդ անձի անհատական կոնտակտային տվյալները:

1.1.4. *Պայմանագրի* 1.1.3-րդ ենտակետի Գ) պարբերությունում նշված *Պատվիրատուն* պարտավորվում է ընդունել և *Կայքում* իր գործողություններն իրականացնելիս՝ առաջնորդվել *Կայքում* տեղադրված «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժնի դրույթներով, որոնք պարտադիր են *Պատվիրատուի* համար:

1.2. Հարթակը ենթակա է օգտագործման *Կայքում* գրանցվելու և *Պատվիրատուի* համար սույն *Պայմանագրով* նախատեսված այլ պարտադիր գործողություններ կատարելու միջոցով:

1.3. *Կայքը Պատվիրատուին* տրամադրվում է «այնպիսին որ կա» և «որպես այդպիսին հասանելի», որը ներառելու է այն հնարավորությունները, որոնք փաստացի հասանելի են լինելու *Պատվիրատուին* գրանցումից հետո և (կամ) նկարագրված են *Կայքի* «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժնում:

1.4. *Պատվիրատուն* պատասխանատվություն է կրում *Կայքում* լրացված ցանկացած տեղեկատվության համար, ներառյալ գրանցվելու ժամանակ տրամադրված տեղեկատվության իսկության համար, որը ներառում է՝

1.4.1. *Պատվիրատուի* նույնականացման քարտի (երկու կողմի) լուսապատճենը.

1.4.2. Այն հայտարարատու ընկերության մաքսային ռեեստրի վկայականի լուսապատճենը, որի հետ *Պատվիրատուն* գտնվում է աշխատանքային իրավահարաբերությունների մեջ.

1.4.3. Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայականը.

1.4.4. Հայտարարատու ընկերության կողմից տրված վերջինիս հետ գործող աշխատանքային հարաբերությունները հավաստող տեղեկանք.

1.4.5. *Կատարողի* կողմից հայցվող այլ տեղեկատվություն՝ ըստ պահանջի:

1.5. *Պայմանագրի* ստորագրմամբ *Պատվիրատուն* հայտարարում և ընդունում է, որ ծանոթացել է *Կայքում* տեղադրված «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժնին և պարտավորվում է պահպանել դրանցում պարտադիր պայմանները:

1.6. «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժինը կարող է միակողմանիորեն փոփոխվել *Կատարողի* կողմից, ընդ որում *Պատվիրատուն* ենթակա է ծանուցման տվյալ փոփոխությունների վերաբերյալ *Պայմանագրի* 8-րդ կետում նշված էլեկտրոնային փոստի միջոցով, որտեղ պետք է սահմանվի այն ողջամիտ ժամկետը, թե երբ են ուժի մեջ մտնելու համապատասխան փոփոխությունները, որը չպետք է պակաս լինի 1 (մեկ) ամսից: Ստորագրելով *Պայմանագիրը՝ Պատվիրատուն* համաձայնվում է «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժինը *Կատարողի* կողմից միակողմանիորեն փոփոխելու իրավունքին և ընդունում է այդ իրավունքը որպես բացառիկ սույն իրավահարաբերությունների նկատմամբ:

1.7. *Ծառայությունը* մատուցվում է *Պայմանագրի* ստորագրման պահից:

1.8. Սույն *Պայմանագիրը* կնքելուց հետո 1 շաբաթվա ընթացքում *Կատարողը Պատվիրատուի* օգտին *Կայքում* ստեղծում է անհատական էջ (admin panel), որը *Պատվիրատուն* վարում է ինքնուրույն իր ռիսկով՝ օգտագործելով *Կայքի* հնարավորությունները «այնպիսին որ կան» և «որպես այդպիսին հասանելի» եղանակով:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. *Ծառայության* դիմաց վճարի ֆիքսված ամսական չափը կազմում է _____ ՀՀ դրամ, որը ներառում է հարկերը և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ պարտադիր վճարները, որը ենթակա է վճարման մինչև յուրաքանչյուր հաջորդող ամսվա 10-րդ օրը:

2.2. Սույն *Պայմանագրի* 2.1-րդ կետում նշված ֆիքսված ամսական վճարի չափը կարող է վերանայվել յուրաքանչյուր օրացուցային տարվա հունվար ամսվա 10-ին, որի շուրջ *Կողմերը* համաձայնություն ձեռք բերելու դեպքում պետք կնքեն սույն *Պայմանագրի* անբաժանելի մաս կազմող համաձայնագիր համապատասխան փոփոխության վերաբերյալ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Եթե *Պատվիրատուն* ունի առարկություն՝ կապված *Ծառայությունների* մատուցման կամ դրա որակի հետ, ապա դրանք ենթակա են ներկայացման *Կատարողին* գրավոր եղանակով *Պայմանագրի* 8-րդ կետում նշված *Կատարողի* էլեկտրոնային փոստին ներկայացնելու միջոցով, որում պետք է շարադրվեն առարկության հիմքերը, պատճառաբանությունը, ենթադրյալ թերությունները կամ պահանջները, որոնք պետք է հանդիսանան առարկության առարկա, ընդ որում առարկությունը պետք է ներկայացվի դրա հիմքում ընկած փաստական հանգամանքի վրա հասնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2. Առարկությունը ստանալուց և այն ուսումնասիրելուց հետո *Կատարողը* կամ՝

3.2.1. Ընդունում է ներկայացված առարկության առարկան, եթե դրանք համարում է հիմնավոր, և վերացնում է հայտնաբերված թերությունները կամ

3.2.2. Մերժում է ներկայացված առարկության առարկան, շարադրելով մերժման հիմքերը գրավոր եղանակով, և ուղարկում այն *Պայմանագրի* 8-րդ կետում նշված *Պատվիրատուի* էլեկտրոնային փոստին:

3.3. *Պայմանագրի* 3.2-րդ կետում նախատեսված գործողությունները ենթակա են կատարման առարկությունը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4. *Ծառայության* մատուցված լինելու վերաբերյալ, ապա այն համարվում է պատշաճ և ամբողջ ծավալով մատուցված, իսկ *Պատվիրատուի* կողմից՝ ընդունված:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. ***Կատարողը* պարտավոր է՝**

4.1.1. *Ծառայությունները* մատուցել պատշաճ որակով, ինքնուրույն և իր միջոցներով.

4.1.2. Ապահովել *Կայքի* անխափան աշխատանքը, իսկ տեխնիկական խնդիրներ առաջանալու դեպքում ողջամիտ ժամկետում վերացնել դրանք.

4.1.3. Ծանուցել *Պատվիրատուին* տեխնիկական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ, որոնք կրում են պլանային և (կամ) ոչ պլանային բնույթ, եթե այդպիսի աշխատանքների իրականացումը կարող է գերազանցել 24 ժամը.

4.1.4. Տրամադրել *Պատվիրատուին* հնարավորություն ընտրելու իր կողմից առաջարկով մաքսային բրոքերական ծառայության չափորոշիչներ, որոնք ներկայացվում են ստորև՝

Ա) կոնտրագենտի իրավասուբյեկտության տեսակը (ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձ).

Բ) նշելու իր կողմից առաջարկվող գործարքի տեսակը (ներմուծում, արտահանում և (կամ) տարանցում դեպի ԵԱՏՄ երկրներ).

Գ) երրորդ անձի կողմից ներկայացված պատվերի առարկա հանդիսացող բեռի փոխադրման եղանակը (ավիափոխադրում, ցամաքային, երկաթուղային, ծովային և (կամ) փոստային).

Դ) մաքսազերծման վայրը.

Ե) բեռի նախնական զննում և հաշվարկ իրականացնելու անհրաժեշտության առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն.

Զ) տերմինալից բեռի բաց թողում իրականացնելու անհրաժեշտության առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն.

Է) մաքսային բրոքերական գործունեության հետ առնչվող լրացուցիչ փաստաթղթերի ձեռքբերման ծառայության առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն:

4.1.5. Տրամադրել *Պատվիրատուին* հնարավորություն *ծանոթանալու* իր կողմից ընտրված թիրախային խմբից դիմող երրորդ անձի պատվերի վերաբերյալ տեղեկատվությանը ներկայացված վերջնաժամկետում.

4.1.6. Առաջնորդվել չեզոքության և բարեխղճության սկզբունքով և պատվիրատուներից որևէ մեկին չտալ նախապատվություն:

4.2. ***Պատվիրատուն* պարտավոր է՝**

4.2.1. *Կայքում* գրանցվելու ժամանակ տրամադրել սույն *Պայմանագրի* 1.4-րդ կետում և դրա ենթակետերում նշված լրիվ և ամբողջական տեղեկատվությունը, ինչպես նաև հեռախոսահամար, էլ. փոստի հասցեի կամ ցանկացած այլ տեսակի տեղեկատվություն, որը կպահանջվի *Կայքում* գրանցումն ավարտին հասցնելու համար.

4.2.2. *Պատվիրատուի* կողմից սույն *Պայմանագրի* 1.1.3-րդ կետում նշված վերջնական հաստատումից հետո մաքսային բրոքերական ծառայություններն իրականացնել ինքնուրույն, բարեխիղճ և պատշաճ որակով, ընդ որում ծառայությունները մատուցելիս՝ դրանք պետք է մատուցվեն այնպես, որ որևէ կերպ ուղղակի կամ անուղղակի եղանակով վնաս չպատճառվի *Կատարողի* բարի համբավին.

4.2.3. Ձեռնպահ մնալ ցանկացած տեսակի գործողություններից կամ անգործությունից, որը կարող է ուղղակի կամ անուղղակի կերպով մոլորեցնել *Կայքի* այլ օգտագործողներին.

4.2.4. Կատարել *Պայմանագրի* 2-րդ կետով նախատեսված ժամկետներում, կարգով և չափով վճարումը.

4.2.5. Որևէ կերպ չօգտագործել *Կատարողի* ապրանքային նշանն առանց վերջինիս գրավոր թույլտվության.

4.2.6. Որևէ կերպ չտեղադրել *Կայքում* այնպիսի նյութ (ֆայլ), որը կարող է հակասել բարոյական համընդհանուր նորմերին, առաջացնել կրոնական, ռասայական, քաղաքական ատելություն կամ այնպիսի վնասակար (վիրուսային) նյութ (ֆայլ), որը կարող է խափանել *Կայքի* աշխատանքը.

4.2.7. Տիրապետել համակարգչից կամ տեղեկատվական տեխնոլոգիաների հետ առնչվող այլ սարքերից օգտվելու նվազագույն հմտություններին.

4.2.8. Չտրամադրել մուտքանունը և (կամ) գաղտնաբառը այլ անձի.

4.2.9. Ուղղակի կամ անուղղակի կամ որևէ այլ կերպով չմիջամտել *Կայքի* տեխնիկական աշխատանքին:

4.3. ***Կատարողն* իրավունք ունի՝**

4.3.1. Պահանջել վճարել *Ծառայության* դիմաց *Պայմանագրի* 2-րդ կետով սահմանված վճարը.

4.3.2. Պահանջել *Պատվիրատուից* տրամադրել իրեն ճշգրիտ և ստույգ տեղեկատվություն, ինչպես նաև *Կայքում* օգտագործել այդպիսին.

4.3.3. Պահանջել *Պատվիրատուից* անհապաղ ուղղել թերի կամ սխալ տեղեկատվությունը, եթե հայտնաբերվել է անհամապատասխանություն.

4.3.4. Ցանկացած պահին և եղանակով խմբագրել, ջնջել և (կամ) հեռացնել առկա տեղեկատվությունն իր նախաձեռնությամբ սույն *Պայմանագրի* խախտման դեպքում.

4.3.5. Կասեցնել *Պատվիրատուի* հաշիվը *Կայքում* սույն *Պայմանագրի* կամ «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ»-ի հնարավոր խախտման վերաբերյալ կասկած ունենալու դեպքում մինչև հնարավոր խախտման հանգամանքների բացահայտումը.

4.3.6. Արգելափակել *Պատվիրատուի* հաշիվը վերջինիս կողմից սույն *Պայմանագրի* կամ «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ»-ի էական խախտման դեպքում, որը վնաս է պատճառել կամ կարող էր պատճառել երրորդ անձանց կամ *Կատարողին*.

4.3.7. Երրորդ անձանց տրամադրել տեղեկատվություն *Պատվիրատուի* վերաբերյալ, եթե այդպիսի տեղեկատվության տրամադրումը արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ.

4.4. ***Պատվիրատուն* իրավունք ունի՝**

4.4.1. Ստանալ տեղեկատվություն երրորդ անձանց կողմից ներկայացված գնառաջարկների վերաբերյալ.

4.4.2. Ունենալ անձնական հաշիվ, որի օգտագործումը չպետք է հակասի սույն *Պայմանագրին*.

4.4.3. Օգտագործել իր հաշիվը և *Կայքը* «այնպիսին որ կա» և «որպես այդպիսին հասանելի»՝ պահպանելով *Պայմանագրի* «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ»-ի պայմանները.

4.4.4. Կատարել պատվերի որոնում՝ ըստ *Կայքում* սահմանված չափորոշիչների.

4.4.5. Պահանջել ապահովել *Կայքի* անխափան աշխատանքը, բացառությամբ *Պայմանագրի* 4.1.3-րդ կետի:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. *Կատարողը* պատասխանատվություն չի կրում *Պատվիրատուի* կողմից *Կայքում* տեղադրված տեղեկատվության իսկության, իրականությանը համապատասխանելու, *Կայքում* տեղադրված նյութերի (ֆայլերի) պարունակության համար:

5.2. *Կատարողը* որևէ կերպ պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց և *Պատվիրատուի* միջև ծագող, փոփոխվող կամ դադարեցող իրավահարաբերությունների համար:

5.3. *Կատարողը* չի կրում որևէ տեսակի պատասխանատվություն օգտագործողների կամ պատվիրատուների կողմից VPN համակարգով կամ համանման այլ եղանակներ կիրառելու միջոցով մուտք գործելու դեպքում օգտագործողի IP հասցեն կամ նույնականացման համար օգտագործվող այլ միջոցները (տվյալներ) բացահայտելու համար:

5.4. *Կատարողը* պատասխանատվություն չի կրում տվյալների արտահոսքի համար, եթե այդպիսի արտահոսքը առաջացել է ոչ իր մեղքով կամ երրորդ անձի կողմից *Կայքի* անխափան աշխատանքը վթարելու և (կամ) երրորդ անձի կողմից *Կայքի* անվտանգության համակարգը ապօրինի շրջանցելու միջոցով:

5.5. *Կողմերը* կրում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության սույն *Պայմանագիրը* խախտելու, չկատարելու կամ թերի կատարելու համար:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար *Կողմերն* ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է *Պայմանագիրը* կնքելուց հետո, և որը *Կողմերը* չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն *Պայմանագրով* պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 երեք ամսից ավելի, ապա *Կողմերից* յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել *Պայմանագիրը*՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս *Կողմին*: COVID-19 համավարակը, ինչպես նաև այլ համանման համավարակներն ու դրանցով պայմանավորված արտակարգ դրության հայտարարումը ու երկարաձգումը չեն համարվում Ֆորս-Մաժորային իրավիճակ, եթե անմիջականորեն չեն բերել այնպիսի անհնարինության, որի դեպքում *Ծառայությունների* մատուցումն ու աշխատանքների կատարումը դարձել են անհնարին: Քաղաքական հուզումները, ռազմական և արտակարգ դրությունը կարող են համարվել անհաղթահարելի ուժ, եթե այն վկայակոչող *Կողմը* ապացուցի, որ այդպիսի հանգամանքներն ունեցել են ուղիղ ազդեցությունը և հետևանք *Ծառայության* մատուցման հնարավորության կամ անհնարինության հետ:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄՆ ՈՒ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

7.1. *Պատվիրատուն* իրավունք ունի առանց պատճառաբանության լուծելու *Պայմանագիրը*՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ձևով ծանուցելով *Կատարողին*՝ ուղարկելով նամակ *Պայմանագրի* 8-րդ կետում նշված էլ. հասցեին: Նշված ծանուցումը ստանալուց հետո *Պատվիրատուի* անհատական էջը ապաակտիվացվելու է, և *Ծառայությունները* դառնալու են անհասանելի:

7.2. *Կատարողն* իրավունք ունի միակողմանի լուծել սույն *Պայմանագիրը* հետևյալ դեպքերում՝

7.2.1. *Պայմանագրի* 2.1-րդ կետում նշված վճարը նվշած ժամկետում չիրականացնելու կամ թերի իրականացնելու դեպքում.

7.2.2. *Պատվիրատուի* կողմից սույն *Պայմանագրի* էական խախտման դեպքում, այսինքն *Պատվիրատուի* կողմից թույլ տված *Պայմանագրի* այնպիսի խախտում, որը կհանգեցնի է *Կատարողի* համար այնպիսի վնասի, որը զգալիորեն կզրկի վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել *Պայմանագիրը* կնքելիս.

7.2.3. Սույն *Պայմանագրի* 4.2-րդ կետի խախտման կամ դրանով ամրագրված իր պարտավորությունների թերի կամ ոչ պատշաճ կատարման դեպքում.

7.2.4. Սույն *Պայմանագրի* 4.4-րդ կետով ամրագրված իր իրավունքների իրացման չարաշահման դեպքում.

7.2.5. *Կայքի* «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժնում ամրագրված կանոնների խախտման դեպքում.

7.2.6. Անբարեխիղճ մրցակցություն իրականացնելու դեպքում.

7.2.7. *Պատվիրատուի* կողմից այնպիսի գործողություն կամ անգործություն թույլ տալու դեպքում, որը վնաս է պատճառել կամ կարող է պատճառել *Կատարողին*.

7.2.8. *Կատարողի* մոտ առաջացել է ողջամիտ կասկած, որ *Պատվիրատուն* օգտագործում է *Կայքը* այլ նպատակներով, որոնք նախատեսված չեն սույն *Պայմանագրով* և *Կայքի* «ԿԱՅՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժնով.

7.2.9. *Պատվիրատուի* կողմից շահերի բախում առաջացնելու կամ փոխկապակցված անձի հետ գործարք կնքելու դեպքում.

7.2.10. *Կատարողի* կողմից ուղարկված նամակներին, գրություններին կամ կապ հաստատելու այլ փորձերին 3 աշխատանքային օրվա ընթացքում չարձագանքելու դեպքում.

7.2.11. Երրորդ անձի կողմից ընդունված պատվերը այլ անձի փոխանցելու դեպքում.

7.2.12. Սույն *Պայմանագրի* 2.2-րդ կետով նախատեսված *Ծառայությունների* մատուցման արժեքը վերանայելու շուրջ համաձայնությունը ձեռք չբերելու դեպքում:

7.3. *Պայմանագրի* լուծման վերաբերյալ ծանուցումն ուղարկվելուց հետո 10 (տաս) օրացուցային օրվա ընթացքում *Կողմերը* պետք է կազմեն փոխադարձ հաշվարկների ակտ (այսուհետ՝ *Ակտ*) միմյանց նկատմամբ առկա դրամական պահանջների կամ պարտավորությունների

վերաբերյալ, որտեղ պետք է նկարագրվեն չկատարված պարտավորությունները, ինչպես նաև փաստացի մատուցված *Ծառայության* դիմաց չկատարված վճարումը:

7.3.1. *Ակտը* ենթակա է կազմման *Կատարողի* կողմից:

7.3.2. Առարկություն չունենալու դեպքում չկատարված պարտավորությունները պետք է կատարվեն *Ակտը* ստանալուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում:

7.3.3. *Ակտի* նկատմամբ առարկություններ ունենալու դեպքում գործում է *Պայմանագրի* 3.1-րդ կետով նախատեսված կարգավորումն այնքանով, որքանով այդպիսի կարգավորումը կարող է կիրառվել առարկություն(ներ)ը ներկայացնելու կամ դրան պատասխանելու կարգավորման էությունից:

7.4. *Պայմանագիրը* կարող է փոփոխվել *Կողմերի* փոխադարձ համաձայնությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որը ենթակա է վավերացման *Կողմերի* կողմից տվյալ փաստաթղթի յուրաքանչյուր էջը ստորագրելու միջոցով:

7.5. Փաստաթղթաշրջանառությունը կարող է իրականացվել ինչպես փոստային, այնպես էլ թվային/էլեկտրոնային եղանակով, օգտագործելով ներառյալ, սակայն չսահմանափակվելով թվային հեռահաղորդակցման հետևյալ միջոցներով՝ Viber, WhatsApp, Telegram կամ համանման այլ միջոցներով: Սույն կետում նշված բոլոր եղանակներով վարվող գրագրությունները և/կամ փաստաթղթաշրջանառությունները պարտադիր են *Կողմերի* համար և կարող են կիրառվել որպես ապացույց վեճերի լուծման ժամանակ:

7.6. *Կողմին* ուղղված առաջարկի պատասխանը կամ լռությունը չի համարվում *Պայմանագրի* փոփոխություն:

7.7. *Պայմանագրով* ուղղակիորեն չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.8. *Պայմանագրի* մեկ (կամ ավելի) կետի անվավերությունը չի հանգեցնում այլ կետերի կամ ընդհանուր *Պայմանագրի* անվավերության:

7.9. Եթե սույն *Պայմանագրի* մեջ օգտագործվող հասկացությունը օգտագործված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ հասկացության հոգնակի տարբերակի վրա և ընդհակառակը, եթե ուղղակի այլ բան չի բխում *Պայմանագրի* բովանդակությունից և էությունից:

7.10. Երկընկալման կամ կամարտահայտության հետ կապված հարցերի կամ մեկնաբանման անհրաժեշտության առաջացման դեպքում *Պայմանագիրը* պետք է մեկնաբանվի այնպես, ինչպես թե այն կազմված է բոլոր *Կողմերի* կողմից, և որևիցե ապացուցման բեռի կանխավարկած չպետք է դրվի այն *Կողմի* վրա, որը հանդիսանում է *Պայմանագրի* կամ դրա առանձին դրույթի հեղինակ: Contra proferentem սկզբունքը ենթակա չէ կիրառման:

7.11. *Կողմերի* անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին, հակառակ պարագայում *Պայմանագրում* առկա տվյալներով արված ծանուցումը համարվում է պատշաճ ծանուցում:

7.12. Սույն *Պայմանագրի* կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր դատարանների ենթակայությունը, հանձնվում է Հայաստանի Հանրապետության Առևտրաարդյունաբերական պալատին (ՀՀ ԱԱՊ) կից մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը՝ համաձայն վերջինիս կանոնակարգի՝ երեք արբիտրների կազմով, դատավարության լեզուն՝ հայերեն, արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևան: Վեճը լուծվում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն:

7.13. Սույն *Պայմանագիրը* ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

7.14. *Պայմանագիրը* կազմված է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր *Կողմին* տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու ՝	*Կատարող* ՝
.....	«ԲՐՈԿԵՐՍ» ՍՊԸ
	Տնօրեն՝
	Վահե Աճառյան
_____	
(ստորագրություն)	
	ՀՎՀՀ՝ 00239913
	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վերին Անտառային 135շ., բն. 18
	Էլ. փոստ՝ join@brokers.am
	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
	Հ/Հ՝ 2050022611261001
	_____
	(ստորագրություն)
	Կ.Տ.